

Մարմինն սակաւ ուրախանայ,
Հոգին է սեաւ ի մէջ մարմնոյն:

Եղեալ են բնական դիւաց,
Հետ նորա դատին զօրն ի բուն,
Չի ամենայն գիրք վկայէ՝
Գարշելի է եւ պիղծ թութուն:

Հոգին ներքուստ աղաղակէ,
Գանգատ առնէ հրեշտակներուն,
Ասէ՝ Բարձեք զիս յայս տեղաց,
Այս գարշելի եւ պիղծ մարմնոյն:

Դժոխոց հոտն այլ խիստ լաւ է,
Քան թէ խմեն զայն պիղծ թութուն,
Խմեն զայն, ծուխն թափեն վերէս,
Չիս սպանանեն ի յայս պահուն:

Տեղս դժուար, գարշ եւ զաղիր,
Մութն եւ խաւարն եւ տղմատուն,
Սատանայ զմեզ պարարեր,
Կերակուր շիներ թշնամոյն:

Ես ձեզ խրատ կու տամ, եղբայրք,
Լաւ միտ դրեք այս բաներուն,
Սատանայի կամքն մի՛ կատարեք,
Դառն եւ դժուար է օր մահուն:

Ոչինչ բանով զձեզ կու զրկեք,
Վնաս կառնեք դուք ձեր հոգւոյն,
Երբ կանանչի այն չար քարքին,
Չնա, կասեն, չտաներ մեղուն: